ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

24 օգոստոսի 2015թ. գյուղ Ջրառատ

2015թվականի օգոստոսի 24-ին տեղի է ունեցել Կոտայքի մարզի Ջրառատ գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովը

Մասնակցությամբ.

Ջրառատ համայնքի ավագանու անդամներ՝ Գառնիկ Մելքոնյանի, Եղիշե Զաքարյանի, Միրան Ալեքսանյանի, Նարինե Մկրտչյանի

Ջրառատի գյուղապետարանի աշխատակազմից՝ Կարինե Սարգսյանի, Լուսինե Եղիազարյանի, Անթառամ Պետրոսյանի, ինչպես նաև համայնքի բնակիչների:

ՕՐԱԿԱՐԳ – Համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ԼՍԵՑԻՆ - Ջրառատ համայնքի ղեկավար Արթուր Ասատրյանի կողմից 01.08.2014թ.- 01.08.2015թ. կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Համայնքի ղեկավար Արթուր Ասատրյանը համառոտ ներկայացրեց կատարված աշխատանքների մասին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ – ֆինանսների բնագավառում ապահովել է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացվել համայնքի ավագանուն: Կազմակերպվել է տեղական հարկերի, տուրքերի և վճարների գանձումն ու վերահսկումը:

2013թ. դեկտեմբերի 14–ին համայնքի ավագնին իր № 42-Ն որոշմամբ ընդունել է 2014թ. բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել է 9978,3 հազ.դրամ, ծախսերը՝ 9978,3 հազ.դրամ: Հողի հարկի չափը 2014թ. կազմել է 286,0 հազ. դրամ, հավաքագրվել է 332,9 հազ.դրամ տարեկան պլանի 116 %-ը:

2014թ.-ի գույքային հարկերը կազմել է 250,0 հազ.դրամ հավաքագրվել է 440,65 հազ.դրամ տարեկան պլանի 176 %-ը:

2014թ. դեկտեմբերի 17-ին համայնքի ավագանին իր № 23-Ն որոշմամբ ընդունել է 2015թ. բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել է 11061,3 հազ. դրամ, ծախսերը՝ 11061,3 հազ.դրամ: 2015թ. հողի հարկը կազմել է 286,0 հազար դրամ, որից 7 ամիսների ընթացքում հավաքագրվել է 163.950 հազ.դրամ, որը կազմել է 7 ամսվա հողի հարկի պլանի 98.2%-ը:

2015թ.-ի գույքային հարկերը կազմել է 250,0 հազ.դրամ 7 ամիսների ընթացքում հավաքագրվել է 550,450 հազ.դրամ, այսինքն 7 ամսվա գույքի հարկի պլանի 377%-ը:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ – քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում կազմակերպվել է համայնքի բնակիչների հաշվառում: Միջոցներ է ձեռնարկվել պաշտպանելու համայնքի բնակիչների օրինական շահերը: Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել քաղաքացիների առաջարկությունները, բողոքները և ձեռնակվել միջոցներ:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ – համայնքում գործող 2 առևտրի օբյեկտների նկատմամբ իրականացվել է հսկողություն, տրվել է ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի թույլտվություններ, որից գանձվել է համապատասխան տուրքերի գումար:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ – սկսվել և ընթացքի մեջ է Ջրառատ համայնքի մանկապարտեզի շենքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքները, որի համար գյուղապետարանը պայմանագիր է կնքել համապատասխան կազմակերպության հետ: Կատարվել է Ջրառատի գյուղապետարանի շենքի մասնակի նորոգում:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ – կրթության բնագավառում աջակցել է համայնքում գործող միջնակարգ դպրոցի /ՊՈԱԿ/ գործունեությանը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ – գյուղատնտեսության բնագավառում կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայություն: Գյուղացիական տնտեսություններին աջակցել է պարարտանյութի ձեռք բերման գործում:

ԵԼՈՒՅԹՆԵՐ – ելույթ ունեցավ Եղիշե Զաքարյանը, առաջարկեց ուշադրություն դարձնել ուղևորա-փոխադրման կազմակերպման և փողոցների լուսավորության համար տարվող աշխատանքների նկատմամբ:

ՈՐՈՇՎԵՑ – համայնքի ղեկավարի ներկայացրած հաշվետվություն ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ